Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-484-03.01.2023-ՏԵ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 18-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետի բ) ենթակետից հանել «կատարված» բառը.

2) ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 3-րդ կետի իբ) ենթակետը.

3) 1-ին մասի 4-րդ կետի գ) ենթակետում «համար» բառից հետո լրացնել «(յուրաքանչյուր առաջնային հայտով)» բառերը:

4) 1-ին մասի 4-րդ կետի իա) ենթակետում «զատելու» բառից հետո լրացնել «և վկայագիր տրամադրելու» բառերը.

5) 1-ին մասի 4-րդ կետի իբ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

իբ)	ապրանքային նշանի միջազգային գրանցման կամ տարածքային ընդարձակման դիմում ներկայացնելու համար	30

6) 1-ին մասի 4-րդ կետի իդ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

իդ)	ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և ապրանքային նշանների հայտերի ընթացիկ հիմնապաշարում որոնում անցկացնելու համար՝ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան յուրաքանչյուր դասով ներկայացված ապրանքային նշանին նույնական կամ նման ապրանքային նշանների համար	20
	արագացված ընթացակարգով որոնում անցկացնելու համար	60
	մեկ իրավատիրոջը և(կամ) հայտատուին պատկանող ապրանքային նշանների համար	60».

7) 1-ին մասի 4-րդ կետում լրացնել իզ)-լթ) նոր ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«իզ)	Եվրասիական տնտեսական միության ապրանքային և սպասարկման նշանների (այսուհետ՝ Միության ապրանքային նշան) հայտ ներկայացնելու համար	35
իէ)	Միության կոլեկտիվ ապրանքային նշանի հայտ ներկայացնելու համար	51
իը)	Միության ապրանքային նշանի հայտի նախնական փորձաքննության փուլում ներկայացման գերատեսչության հարցմանը պատասխանելու ժամկետը երկարաձգելու համար	15

իթ)	Որպես Միության ապրանքային (կոլեկտիվ) նշան գրանցելու համար հայտարկված նիշի փորձաքննություն անցկացնելու համար (եթե գրանցումը խնդրարկվում է ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) մեկից - երեք դասերի համար) (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	102
	երեքից ավելի յուրաքանչյուր դասի համար լրացուցիչ (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	11
իլ)	Միության կոլեկտիվ ապրանքային նշանի հայտը Միության ապրանքային նշանի հայտի փոխակերպելու համար	25
լ)	Միության ապրանքային նշանի հայտը միության կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպելու համար	25
լա)	Միության կոլեկտիվ նշանը Միության ապրանքային նշանի փոխակերպելու համար	51
լբ)	Միության ապրանքային նշանը Միության կոլեկտիվ նշանի փոխակերպելու համար	51
լգ)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի հայտում փոփոխություն կատարելու համար	20
լդ)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի հայտի փորձաքննության արդյունքների հիման վրա ծանուցման վերաբերյալ փաստարկներ և դիտողություններ ներկայացնելու լրացուցիչ ժամկետի տրամադրման համար	15
ե)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանը գրանցելու և վկայագիր տրամադրելու համար	76
լզ)	Միության ապրանքային նշանի միասնական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար	25
լէ)	Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի տնօրինման (իրավունքի փոխանցում, լիցենզիա, ֆրանչայզինգ) գրանցում	76
լը)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման համար (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	180
լթ)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման դիմում ներկայացնելու համար լրացուցիչ 6-ամսյա ժամկետ տրամադրելու համար	76».

8) 1-ին մասի 5-րդ կետում լրացնել ժբ)-ժը) նոր ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«ժբ)	Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման հայտ ներկայացնելու և հայտարարված անվանման փորձաքննություն անցկացնելու համար	102

ժգ) Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման հայտում փոփոխություն կատարելու համար 20

ժդ) Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքը գրանցելու համար 102

ժե) Միության ապրանքի ծագման տեղանվան միասնական գրանցամատյանի տվյալներում փոփոխություն կատարելու համար 25

ժզ) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման համար (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 180

ժէ) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման դիմումի ներկայացմանը լրացուցիչ 6 ամիս ժամկետ տրամադրելու համար 76

ժը) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքը գրանցելու և վկայագիր տրամադրելու համար (վերաբերում է այն ապրանքի ծագման տեղանուններին, որոնք գրանցված են մինչև 2020 թվականի փետրվարի 3-ի «Եվրասիական տնտեսական միություն ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքի ծագման տեղանվան մասին» պայմանագրի ուժի մեջ մտնելը) (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 51».

9) 8-րդ կետի զ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննության դիմում ներկայացնելու և քննությունն ընդունելու համար 20».

10) 8-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

թ) լիցենզիայի, ենթալիցենզիայի, իրավունքների փոխանցման (զիջման) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին լիազոր մարմնի որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար 50».

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ, 9-րդ, 10-րդ կետերը չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական լիազոր մարմին կամ բողոքարկման խորհուրդ ներկայացված հայտերի և դիմումների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 18-րդ հոդվածի՝

3) 1-ին մասի 3-րդ կետի բ) ենթակետից հանել «կատարված» բառը.

4) ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 3-րդ կետի իբ) ենթակետը.

~~5) 1-ին մասի 4-րդ կետի ա) և բ) ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~ա)~~	~~ապրանքային նշանի հայտը գրանցելու, հայտի նախնական փորձաքննություն անցկացնելու և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար~~ ~~հինգից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ~~	~~30~~ ~~10~~
~~բ)~~	~~ապրանքային նշանի հայտի ըստ էության փորձաքննության անցկացման և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար~~ ~~մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ~~	~~40~~ ~~15».~~

~~4)~~ 3)1-ին մասի 4-րդ կետի գ) ենթակետում «համար» բառից հետո լրացնել «(յուրաքանչյուր առաջնային հայտով)» բառերը:

~~5) 1-ին մասի 4-րդ կետի ժա) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«ժա)~~	~~ապրանքային նշանի գրանցման և վկայագիր տրամադրելու համար~~	~~50~~
	~~հինգից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ~~	~~10».~~

~~6)~~ 4) 1-ին մասի 4-րդ կետի իա) ենթակետում «զատելու» բառից հետո ~~ավելացնել~~ լրացնել «և վկայագիր տրամադրելու» բառերը.

~~7)~~ 5) 1-ին մասի 4-րդ կետի իբ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

իբ)	ապրանքային նշանի միջազգային գրանցման կամ տարածքային ընդարձակման դիմում ներկայացնելու համար	30

~~8)~~ 6) 1-ին մասի 4-րդ կետի իդ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

իդ)	ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և ապրանքային նշանների հայտերի ընթացիկ հիմնապաշարում որոնում անցկացնելու համար՝ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան յուրաքանչյուր դասով ներկայացված ապրանքային նշանին նույնական կամ նման ապրանքային նշանների համար	20
	արագացված ընթացակարգով որոնում անցկացնելու համար	60
	մեկ իրավատիրոջը և(կամ) հայտատուին պատկանող ապրանքային նշանների համար	60».

~~9)~~ 7) 1-ին մասի 4-րդ կետում ~~ավելացնել~~ լրացնել իզ)-լթ) նոր ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«իզ)	Եվրասիական տնտեսական միության ապրանքային և սպասարկման նշանների (այսուհետ՝ Միության ապրանքային նշան) հայտ ~~(այսուհետ՝ Միության ապրանքային նշան)~~ ներկայացնելու համար	35
իէ)	Միության կոլեկտիվ ապրանքային նշանի հայտ ներկայացնելու համար	51
իը)	Միության ապրանքային նշանի հայտի նախնական փորձաքննության փուլում ներկայացման գերատեսչության հարցմանը պատասխանելու ժամկետը երկարաձգելու համար	15
իթ)	Որպես Միության ապրանքային (կոլեկտիվ) նշան գրանցելու համար հայտարկված նիշի փորձաքննություն անցկացնելու համար (եթե գրանցումը խնդրարկվում է ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) մեկից - երեք դասերի համար) (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	102
	երեքից ավելի յուրաքանչյուր դասի համար լրացուցիչ (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	11
իլ)	Միության կոլեկտիվ ապրանքային նշանի հայտը Միության ապրանքային նշանի հայտի փոխակերպելու համար	25
լ)	Միության ապրանքային նշանի հայտը միության կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպելու համար	25
լա)	Միության կոլեկտիվ նշանը Միության ապրանքային նշանի փոխակերպելու համար	51
լբ)	Միության ապրանքային նշանը Միության կոլեկտիվ նշանի փոխակերպելու համար	51
լգ)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի հայտում փոփոխություն կատարելու համար	20

լդ)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի հայտի փորձաքննության արդյունքների հիման վրա ծանուցման վերաբերյալ փաստարկներ և ~~նկատառումներ~~ դիտողություններ ներկայացնելու լրացուցիչ ժամկետի տրամադրման համար	15
լե)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանը գրանցելու և վկայագիր տրամադրելու համար	76
լզ)	Միության ապրանքային նշանի միասնական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար	25
լէ)	Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի տնօրինման (իրավունքի փոխանցում, լիցենզիա, ֆրանչայզինգ) գրանցում	76
լը)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման համար (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	180
լթ)	Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման դիմում ներկայացնելու համար լրացուցիչ 6-ամսյա ժամկետ տրամադրելու համար	76».

~~10)~~ 8) 1-ին մասի 5-րդ կետում ~~ավելացնել~~ լրացնել ժբ)-ժը) նոր ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«ժբ)	Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման հայտ ներկայացնելու և հայտարարված անվանման փորձաքննություն անցկացնելու համար	102
ժգ)	Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման հայտում փոփոխություն կատարելու համար	20
ժդ)	Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքը գրանցելու համար	102
ժե)	Միության ապրանքի ծագման տեղանվան միասնական գրանցամատյանի տվյալներում փոփոխություն կատարելու համար	25
ժզ)	Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման համար (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն)	180
ժէ)	Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման դիմումի ներկայացմանը լրացուցիչ 6 ամիս ժամկետ տրամադրելու համար	76

ժը) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքը գրանցելու և վկայագիր տրամադրելու համար (վերաբերում է այն ապրանքի ծագման տեղանուններին, որոնք գրանցված են մինչև 2020 թվականի փետրվարի 3-ի «Եվրասիական տնտեսական միություն ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքի ծագման տեղանվան մասին» պայմանագրի ուժի մեջ մտնելը) (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 51».

~~11)~~ 9) 8-րդ կետի զ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննության դիմում ներկայացնելու և քննությունն ընդունելու համար 20».

~~12)~~ 10) 8-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

թ) լիցենզիայի, ենթալիցենզիայի, իրավունքների փոխանցման (զիջման) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին լիազոր մարմնի որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար 50».

Հոդված 2. ~~Անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի ~~3-րդ, 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ~~ 5-րդ, 9-րդ, 10-րդ կետերը չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական լիազոր մարմին կամ բողոքարկման խորհուրդ ներկայացված հայտերի և դիմումների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-484-03.01.2023-ՏԵ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխությունը, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում «Օրենք» բառին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ և 5-րդ կետեր	Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել 3-րդ և 5-րդ կետերը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թեև Նախագծով առաջարկվել է ապրանքային նշանի նախնական փորձաքննության համար սահմանել լրացուցիչ տուրք, որի անհրաժեշտությունն առաջացել է այն բանից հետո, երբ հայտատուները, հատկապես նրանք ովքեր պետական տուրքը վճարում են նվազեցված դրույքաչափով, ապրանքային նշանը գրանցման են ներկայացնում ԱԾՄԴ 45 դասում ընդգրկված բոլոր ապրանքների ու ծառայությունների համար, անկախ նրանից օգտագործելու են ապրանքային նշանը այդ բոլոր ապրանքների և ծառայությունների համար, թե՝ ոչ: Սակայն	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			շարունակական քննարկումների արդյունքում որոշվեց նոր տուրք չսահմանել ապրանքային նշանի նախնական փորձաքննության համար, քանի որ ապրանքային նշանի փորձաքննության համար մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար արդեն իսկ սահմանված է պետական տուրք: Այս փոփոխությունը միտված է նաև տնտեսավարողներին ավելի չծանրաբեռնելուն: Ըստ այդմ նախագծի 1-ին հոդվածի կետերի համարակալումը վերանայվել է:		
4.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետեր	Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում կիրառված «ավելացնել» բառն առաջարկում ենք փոխարինել «լրացնել» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտում լրացում կատարվում է լրացնելու միջոցով: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 9-րդ կետ	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 9-րդ (լրամշակված 7-րդ) կետով Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում լրացվող նոր «իզ» ենթակետում փակագծերի մեջ նշված (այսուհետ՝ Միության ապրանքային նշան) բառերը լրացնել «հայտ» բառից առաջ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի հաջորդիվ կարգավորումներում կիրառված «Միության ապրանքային նշան» եզրույթն իր մեջ կլանելու է նաև Միության ապրանքային նշանի հայտը, որը չի կարող նույնացվել Միության ապրանքային նշանի հետ: Սույն	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			դիտարկման հիմքում ընկած է «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 2-րդ հոդվածով սահմանված հասկացությունների սահմանումները:		
6.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 9-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 9-րդ (լրամշակված 7-րդ) կետով Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում լրացվող նոր «լդ» ենթակետով պետական տուրք է սահմանվում Միության ապրանքային նշանի հայտի փորձաքննության արդյունքների հիման վրա ծանուցման վերաբերյալ փաստարկներ և նկատառումներ ներկայացնելու լրացուցիչ ժամկետի տրամադրման համար: Մինչդեռ Պայմանագրի 9-րդ հոդվածի 7-րդ մասով պետության օրենսդրությամբ սահմանված տուրք վճարելու պահանջ նախատեսված է փաստարկներ և դիտողություններ ներկայացնելու լրացուցիչ ժամկետի տրամադրման համար: Հիմք ընդունելով վերոգրյալը և «Նորմատի իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ առաջարկում ենք Նախագծում կիրառել Պայմանագրով սահմանված հասկացություններ և եզրույթներ: Ըստ այդմ Նախագծի 1-ին հոդվածի 9-րդ (լրամշակված 7-րդ) կետով Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում լրացվող նոր «լդ» ենթակետում «նկատառումներ» բառը փոխարինվել է «դիտողություններ» բառով:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

7.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածից հետո նշված «Անցումային դրույթներ» ձևակերպումը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: Հոդվածի մասերը, կետերը և ենթակետերը վերնագիր չեն ունենում:»:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի «3-րդ, 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ» թվերը փոխարինել «5-րդ, 9-րդ, 10-րդ» թվերով՝ հաշվի առնելով 3-րդ կետով ներկայացված առաջարկությունները:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է: